ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1145-Ա « 27 » մարտի 2025թ.

ՆՈՐԱԳԱՎԻԹ 13-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.161 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Սամվել Պողոսյանի լ/ա Արթուր Պողոսյանի դիմումը՝ Նորագավիթ 13-րդ փողոց h.161 (Նորագավթի նախկին «Նոր Ուխղի» կոլտնտեսական հողատարածքներից) հասցեում գտնվող հողամասի (տնամերձ) սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել ՀՀ արդարադատության նախարարության «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ-ի 10.04.2008թ. Պ-926 արխիվային տեղեկանքը, «Հայաստանի Ազգային Արխիվ» Երևանի քաղաքային մասնաճյուղի 14.03.2008թ. 01-20/215 (Շահումյանի շրջխորհրդի գործկոմի 1995թ. մայիսի 27-ի թիվ 21/90 որոշումից) քաղվածքը, /որտեղ նշված է, որ 300քմ տնամերձ-հողամասը հատկացվել է Սամվել Պողոսյանին (ցուցակ h.91)/, որակավորում ստացած անձի /0268 վկայական/ կողմից տրամադրված հողամասի հատակագիծը, Շենգավիթի թաղապետարանի 03.04.2008թ. h.22/01-1109 և Կադաստրի կոմիտեի 07.02.2025թ. h.ԱՏ-07022025-01-1164 տեղեկանքները:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի h.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գոտում:

ՀՀ կառավարության 04.06.2020թ. h.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի հողամասը գտնվում է 8-րդ գոտում:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորագավիթ 13-րդ փողոցի h.161 հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 300.0քմ, որքան որ ամրագրված է «Հայաստանի Ազգային Արխիվ» Երևանի քաղաքային մասնաճյուղի 14.03.2008թ. 01-20/215 (Շահումյանի շրջխորհրդի գործկոմի 1995թ. մայիսի 27-ի թիվ 21/90 որոշումից) քաղվածքում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության h.Դ-12632-25 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Սամվել Պողոսյանին տրամադրված, Նորագավիթ 13-րդ փողոց հ.161 (Նորագավթի նախկին «Նոր ՈՒղի» կոլտնտեսական հողատարածքներից) հասցեում գտնվող հողամասի (տնամերձ) սահմանները որոշվում են 300.0քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246